Հայ գրականություն, Արձակ, Էսսե

13+

Մկրտիչ Արմեն

ՊԱՏՄՎԱԾՔ—ԵՐԳ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1

Միակ ծառը կանգնած էր բլուրի գագաթին և նրա շուրջը ոչ ծառեր կային, ոչ էլ ծառ կար: Նրա ստվերը չոր գետնի վրա էր, և՛ երկար էր, և՛ լայն էր: Այդ ծառի կողքով անցնում էր փոշեհագ ճանապարհը և գնում էր, և գնում էր.. .

Ո՞ւր էր գնում ճանապարհը՝ իջնում էր ձորը: Ո՞ւր էր գնում ճանապարհը՝ ձորից ելնում էր: Նա փոշեգույն սպիտակ երիզով հատել էր ձորը, բլուրը, դաշտը, նորից ձորը, ու բլուրը, ու դաշտը: Մերթ ելնում էր, մերթ իջնում էր, աջ էր թեքվում, ձախ և ապա նորից նույնը: Ճանապարհը ոչ հարթ էր, ոչ ուղիղ էր և ոչ էլ երևում էր անընդհատ: Ճանապարհը երևում էր մինչև ձորը և էլ չէր երևում: Բլուրից էլ՝ մինչև դաշտը և նորից նույնը: Այդպես կցկտուր անցնում էր ճանապարհը, իջնում էր, ելնում, թեքվում, ոլորվում այս ու այն կողմ և գնում էր, և գնում էր. ..

2

Ինչո՞ւ միակ ծառի մոտ մարդ ստվերի հմայքն զգում է ավելի, քան անտառի մոտ: Միակ ծառի ստվերը գրավում էր, որ չոր գետնի վրա էր, երկար էր ու լայն: Սայլապանը նստեց ծառի տակ, եզները նստեցրեց ստվերի մեջ, և սայլի կեսը մնաց արևի տակ: Շուրջը, բլուրի վրա, ահա այն բլուրի վրա, հեռու դաշտում և մյուս բլուրի վրա՝ արև էր ու շոգ էր: Միակ ծառն էր հով անում, իսկ ճանապարհը շարունակվում էր այդ միակ ծառի կողքով և գնում էր, և գնում էր.. .

Ինչո՞ւ փոքրիկ աղբյուրի մոտ մարդ ջրի հմայքն զգում է ավելի, քան գետի մոտ: Աղբյուրն առվակի մեղմ կարկաչով էր հոսում և սառն էր ու մաքուր էր:

Սայլապանը խմեց: Սայլապանը վեր կացավ ու վեր կացան երկու եզները:

Նորից ճանապարհն էր ու ճանապարհի վրա փոշի էր, նաև անիվների ճռռոցը, նաև մազանման թուքը՝ եզների բերանից: Ճիպոտը դանդաղ ու համաչափ օրորվում էր, երգն էր երգվում ակամայից, սայլն էր ընթանում իր ճանապարհը, և ճանապարհը դեռ երկար էր և գնում էր, և գնում էր.. .

3

Լեռների խորդուբորդություն և ձորերի ոլորներ: Որտեղի՞ց ձեր մեջ այդքան հարթություն և ճանապարհ՝ այդքան ուղղաձիգ: Երկաթե զույգ ռելսերով գնացքն էր սուլում ու գալիս էր: Հարթ և ուղիղ էր նրա ճանապարհը: Նա ձորը ճեղքել էր, բլուրը ծակել էր, լանջը հարթել էր և նորից նույնը: Նա հեռվից էր գալիս: Նա մոտեցավ: Նա սուլեց և նա անցավ: Նրա ետևից, իբրև երկաթե ոտքերի երկաթե հետքեր, ռելսերը մնացին և ցնդող ծուխը մնաց: Իսկ գնացքն անցավ սուլելով և երևում էր, թե ինչպես նա սլանում էր և գնում էր, և գնում էր. ..

Գետնուղուց դուրս գալիս ռելսերի ճանապարհն ու փոշու ճանապարհն իրար էին խաչաձևում: Ո՞ր ճանապարհն էր որի վրայով անցնում: Ո՞ր ճանապարհն էր կոխ տվել որին.. .

Սայլը ճռռալով էր գալիս և հասնում էր: Նա մոտեցավ և ուզում էր անցնել ռելսերը:— Կա՛ց,— լսվեց հանկարծ, երկաթը փակեց սայլի ճանապարհը, մի բան խաչաձևեց և անցավ շեշտակի, ապա փակող երկաթը նորից բարձրացավ և էլ ոչինչ: Սայլապանն ու եզները հազիվ հասկացան: Երբ նրանք անցան ռելսերի վրայով և դանդաղ ճռռոցով սայլն իր ճանապարհը շարունակեց, գնացքն արդեն ո՛ւր էր հասել և գնում էր, և գնում էր…

4

Դաշտերով տագնապ անցավ: Բլուրներով տագնապ անցավ: Ձորերով տագնապ անցավ: Ձորերը տոչորվում էին բույսերի կարոտից, բլուրները՝ ծառերի կարոտից, և դաշտը՝ ջրի: Այրված ու չոր տափաստանից ջեռ շոգն էր փչում, բայց նրա հնչյունների մեջ ծաղրի պես լսվում էին ջրի խոխոջանք և ծառերի սոսափյուն: Ճանապարհը կանաչավորվել էր ուզում ծառերով, և դաշտն արծաթավորվել էր ուզում ջրով: Իսկ նրանց բաղձանքը կատարելու համար սայլն իր ճանապարհով և գնացքն իր ճանապարհով՝ անցել էին և գնում էին, և գնում էին.. .

Գնացքը չէր երևում:

Բլուրի վրայից, որտեղ միակ ծառն էր, լավ էին երևում ձորն ու շրջակա բլուրները: Ծառի ստվերում նստած նախրապանը տեսավ սայլը, որ ձորն էր իջնում: Երբ երկու ժամ հետո նորից նայեց, սայլը հազիվ էր հասել մյուս բլուրի ստորոտին:

Նախրապանը քնեց, իսկ նախիրը որոճում էր: Կեսօրից շատ հետո արթնացավ նախրապանը և շուրջը նայեց: Սայլը հասել էր այն մյուս բլուրի լանջին: Արևի շողերի տակ սայլապանը սևին էր տալիս, և դեղին երևում էին զույգ եզները: Այնտեղ էլ ճանապարհը սպիտակ փոշու երիզ էր և գնում էր, և գնում էր. ..

Նախրապանը նորից քնեց: Փոքրիկ նախիրը, ստվերում նստած, առանց ձանձրույթի որոճում էր: Ստվերը թեքվեց, և արևի տակ մնացած մի քանի կենդանիները փոխեցին իրենց տեղը:

Ստվերի սահմանից դուրս գետինն այլևս պայծառ արևագույն չէր: Շողերը թեքվել էին և իրիկնանում էր: Միակ ծառի ստվերը երկարեց, երկարեց, մինչև ո՞ւր հասավ: Արթնացավ նախրապանը: Արևի մնացորդը վերջին շողերով ոսկեզօծել էր բլուրներից մեկի գագաթն ու գագաթով անցնող ճանապարհը: Նախրապանը նայեց: Սայլն արդեն հասել էր այնտեղ և երևում էր հորիզոնի վրա, վերջին շողերի տակ: Նա գնում էր հորիզոնով, ապա թեքվեց դեպի իրենց գյուղը:

Սայլը վերևում անհետացավ:

Իսկ այդ ժամանակ գնացքը որտե՞ղ էր, որտե՞ղ էր. . .

Նրանք երկուսն էլ գնում էին՝ սայլն ու գնացքը: Մեկն՝ իր ընթացքով ու մյուսն՝ իր: Մեկն իր ճանապարհով մյուսն՝ իր: Ու տարբեր էր նրանց ընթացքն ու տարբեր էին ճանապարհները: Դրանք խաչաձևել էին իրար: Մեկը մի տեղ էր ուզում հասնել և մյուսը՝ մի ուրիշ տեղ: Ճանապարհները նրանց դեմն էին և գնում էին, և գնում էին.. .

5

Սայլի ճանապարհը քարքարոտ է ու փոշեհագ է: Նա իջնում է ձորը, և սայլապանը վախենում է, որ սայլը կշրջվի: Նա բարձրանում է բլուրը, և սայլապանը վախենում է, որ եզները կնստեն: Ոլոր ճանապարհով է գնում սայլը, ոլործուն, իսկ մութն իջնում է: Դանդաղ է գնում սայլը.. .

Եզների նստելու վախը կա, անիվի ջարդվելու վախը կա, և վախը կա սայլի շրջվելու: Անձրևը կարող է գալ, իսկ սայլապանը կթրջվի: Գիշերը կարող է իջնել, իսկ սայլապանը կուշանա: Բայց անշտապ շարժում է նա իր ճիպոտը, և առաջ են օրորվում եզները և գնում են, և գնում են.. .

Երբ արևն է այրում՝ սայլապանը քրտինքի մեջ տոչորվում է, իսկ երբ քամին է փչում՝ սայլապանն իր քուրջերի մեջ կծկվում է:

Երկնքի կապույտը ցած է իջնում, դառնում է մուգ, իսկ հետո՝ սև: Մութն իջնում է, և կծկվում է սայլապանի սիրտը: Ամայի տափաստանում ոչ ոք չկա, և այս մենակությունը...

Մենակությունը տխուր է և մենակությունը ձանձրալի է: Ինքն իր հետ է խոսում սայլապանը: Սայլապանը երգում է և հետո նորից ինքն իր հետ է խոսում սայլապանը: Նաև անիվների մազութը վերջացել է, և լսվում է դրանց ցավագար ճռռոցը: Չեն շտապում սայլն ու սայլապանը և գնում են, և գնում են. ..

6

Մթին գիշերում գնացք երևաց: Նա հաստատընթաց է գալիս: Մարդը նստել է գնացքի մեջ ու դուրս է նայում լուսամուտից ու մտածում է:

— Ահա մութն է դրսում, ու մութը շատ է,— մտածում է նա:— Իսկ այստեղ, ներսում լույս է, և որքա՜ն լավ է, որ լույս է:

Դրսում, խավարի մեջ, անտեսանելի քամին է հորդում այս կողմ ու այն կողմ: Եթե մարդն այնտեղ լինի, որքա՜ն վատ կլինի: Կլինի վատ ու կլինի տխուր: Իսկ այստեղ, ներսում, տաք է, և որքա՜ն լավ է, որ տաք է:

Դրսում մենակություն է, և լռություն է, և մարդ չկա: Եթե մարդն այնտեղ լինի, մենակություն կլինի նրա շուրջը և մենակություն կլինի նրա հոգում: Եվ լուռ կլինի, և տխուր, և վատ: Իսկ այստեղ, ներսում, հարյուրներն են, և որքա՜ն լավ է, որ հարյուրներն են:

Ահա անցնում է եզասայլը: Գնացքն արշավով անցավ, ու նա ետ մնաց: Երբ մենք հասնենք տեղ, նա դեռ ո՞ւր կմնա և ճանապարհին կլինի: Մենակ, դանդաղ, խղճալի... Իսկ այստեղ գնացքն է արշավում իր հաստատուն ընթացքով, մենք սլանում ենք դեպի հեռու և գնում ենք, և գնում ենք:

Որքա՜ն լավ է եռակի երջանկությունը: Մեկ՝ այն, որ լույս է, մեկ՝ այն, որ տաք է, և մեկ էլ այն, որ աշխուժություն է բազմամարդ: Դրսում մութ է, դրսում ցուրտ է և մեկ էլ այն, որ լուռ է, անմարդ: Եվ այս է պատճառը, որ սիրելի է գնացքն ու սիրելի են ռելսերը:

Թող անձրև գա դրսում՝ այստեղ չի գա: Թող քամի լինի դրսում՝ այստեղ չի լինի: Թող երկար լինի ճանապարհը՝ որքան ուզում է: Հաղթական է գնացքի երթը և նրա ճանապարհը հաստատուն է:

Ես կեցցե եմ ասում մարդուն ու երկաթին, ես կեցցե եմ ասում երկաթին ու մարդուն և գնում եմ, և գնում եմ.. .

1928